տելի հակառակորդքս և ընթանան 'ի գործ որում 'ի գործոց նոցայ ծնանի սահման բազում, այսինքն գարուն բուրմամբ անուշից, ամառ պըտղաւէտ, աշուն ճարպաբեր, ձմեռ պարարտացուցիչ. սոքայ ամենեքեան կալով հակառակ ընդ միմեանց՝ հնազանդ Օրինաց արարչին իւրեան ցուցանեն մեզ աշխարհ լրիւ ողորմութեամբ արարչին մերոյ և կալով և ճնալով սոցայ հնազանդ Օրինաց Տեառն իւրեանց՝ պահեն ամենայն ծնունդ 'ի ներքոյ արեգական 'ի վերայ երկրի և ծովու հնազանդ Օրինաց նոցայ այսինքն՝ ծնանիլ, մանկանալ, տղայանալ ծերանալ, նուազիլ և անկանիլ և սովաւ փառաւորին ամենայն ծընընդոցէ թէ բանական և թէ անասուն բնութենէ, և ընծայեն այս ամենայն փառս հանդերձ պաշտամամբ և փառաբանութեամբ արարչին իւրեանց. այսպիսեաւ և բազում այլ նման սոցայ պատուէր և սահման Տեառն արարչին մերոյ ընթանայ 'ի վերայ ստեղծուածոց իւրոց որպէս էրէկ և այսօր նոյն մինչև կէտ ժամանակին, որում ինքն արարիչն միայն գիտէ որ 'ի բնութենէ մերմէ անքննելի և անասելի է, բայց 'ի աւանդութենէ սրբոյ Եկեղեցւոյն Հայաստանեաց որում հաւատացեալ եմք, ուրեմն բարեկամք իմ նայերուք 'ի խառնի խուռ ընթացից և անսահման վարուց մերոց, որում յառաջնում անցին մէջ մեր և երեսս սեպհական աշխարհին մերոյ որ